ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/32

ք. Երևան «18» 04 2017թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և <<ՄԱՆՄԱՐ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Կատարող/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել ուսումնական նյութերի տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, պահանջել վերադարձնելու որպես կանխավճար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N 1 և N 2 հավելվածներին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Կատարողին վճարել որպես կանխավճար վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 80300000 (ութսուն միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին վճարել կանխավճար պայմանագրի գնի 100% չափով համաձայն N 3 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

4.3 Պատվիրատուն կանխավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության մատուցման ավարտից հետո՝ հանձման–ընդունման արձանագրության հիման վրա:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հետ են գանձվում Կատարողին որպես կանխավճար փոխանցված գումարից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն ք.Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005122 ՀՎՀՀ 02512868	<<ՄԱՆՄԱՐ>> ՓԲԸ ք. Երևան, Ղ. Փարպեցի 9, բն. 7 Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան Հ/Հ 217001025956001 ՀՎՀՀ 02533144
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ ---------- Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ ---------- Ա. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ.

18 04 Հավելված 1
<< >> << >> 201/թ կնքված
ՀՀԿԳՆԲԸԱՀՇՁԲ-17/32 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկա են հանդիսանում ուսումնական նյութերի տպագրման ծառայությունները
/այսուհետ՝ Ծառայություն/

Ծառայությունը նախատեսում է ներքոնշյալ ուսումնական նյութերի տպագրումը.

Հ/Հ	Անվանում	Հեղինակներ	Տեխնիկական հատկանիշներ						
			Չափսը	Էջերի թիվը	Տեքստի գույնը	Տեքստի թուղթը	Կազմի գույնը	Կազմի հաստ.	Կազմի երեսպատում
1	101 զարմանահրաշ գիտափորձեր	Նեիլ Արդլի	225x280	120	4	115 գրամ	4	կոշտ կազմ	լամինացված
2	Ռուս-հայերեն բառարան հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների (Русско-армянский словарь синонимов, антонимов, омонимов, паронимов)	Ռ.Աղայան, Ն.Բայբուրության, Ռ.Գրձելյան	170x240	464	1	70 գրամ	4	300 գրամ	լամինացված
3	Տրամաբանական խաղեր	Ա.Հակոբյան, Ն.Խրիմյան	165x240	200	4	80 գրամ	4	300 գրամ	լամինացված
4	Տրամաբանական խաղեր ՈՒՉ	Ա.Հակոբյան, Ն.Խրիմյան	145x200	196	1	70 գրամ	2	300 գրամ	լամինացված
5	Հայ գրողների դիմանկարներ	Խ.Հակոբյան	195x280	39	4	300 գրամ	4	300 գրամ (տուփով)	լամինացված

1-5 կետերի համար

Ելքային տեղեկությունները — Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում — Կազմի վրա, տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝<<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

Փոխադրումը և բեռնաթափումը — Կատարողի կողմից, համաձայն կից բաշխման ցուցակի:

Պատվիրատու
Ն. Հարությունյան

Կատարող
Ա. Հարությունյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ /ՄԱՆՄԱՐ ՓԲԸ, 2017թ/

Հ/Հ	Մարզի անվանումը, դպրոցները	<<101 զարմանահրաշ գիտափորձեր>> Նախատեսված է տարրական և հիմնական դպրոցների սովորողների համար	Ռուս-հայերեն բառարան հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների (Русско-армянский словарь синонимов, антонимов, омонимов, пароним ов) Նախատեսված է հիմնական և ավագ դպրոցների սովորողների, ինչպես նաև ռուսաց լեզվի ուսուցիչների համար	Տրամաբանական խաղեր Նախատեսված է հիմնական դպրոցների սովորողների համար	Տրամաբանական խաղեր ՈՒՔ Նախատեսված է մաթեմատիկայի ուսուցիչների համար	Հայ գրողների դիմաթեկարներ Նախատեսված է տարրական, հիմնական և ավագ դպրոցներում օգտագործելու համար
1	**Երևան՝**	1300	1000	3000	300	250
2	**Արագածոտն՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	600	335	1000	100	95
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	15	0	0	5
3	**Արարատ՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	600	325	1000	100	95
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	25	0	0	5
4	**Արմավիր՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	600	320	1000	100	94
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	30	0	0	6
5	**Գեղարքունիք՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	600	310	1000	100	90
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	40	0	0	10
6	**Լոռի՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	1000	445	2000	200	185
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	55	0	0	15
7	**Կոտայք՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	600	240	1000	100	85
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	60	0	0	15
8	**Շիրակ՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	1000	410	2000	200	180
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	90	0	0	20
9	**Սյունիք՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	600	275	1000	100	95
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	25	0	0	5
10	**Վայոց Ձոր՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	300	185	500	50	40
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	15	0	0	5
11	**Տավուշ՝**					
	Մարզային ենթակայության դպրոցներ	300	130	500	50	45
	ԿԳՆ ենթակայության դպրոցներ	0	20	0	0	5
12	ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ	0	150	0	0	55
	ԸՆԴԱՄԵՆԸ	**7500**	**4500**	**14000**	**1400**	**1400**

Ուսումնական նյութերը հանձնել Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների կրթության վարչություններ

<< ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցների բաշխումն իրականացնել համաձայն կից ցուցակի:

Պատվիրատու

_____ Ն. Հարությունյան

Կատարող

_____ Ա. Հարությունյան

ՑՈՒՑԱԿ

/ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ/

N	Դպրոցը	Հասցեն	Հեռախոս	Ռուս-հայերեն բառարան հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների (Русско-армянский словарь синонимов, антонимов, омонимов, паронимов)	<<Հայ գրողների դիմանկարներ>>
1	թիվ 2 ավագ դպրոց	Կենտրոն, Տիգրան Մեծի 34	569105	5	1
2	ԵՃՇՊՀ-ի Մ. Աղբալյանի (թիվ 3 ավագ դպրոց)	Կենտրոն, Խանջյան 9	567573	6	1
3	թիվ 16 ավագ դպրոց	Էրեբունի, Բուռնազյան 37	572680	2	1
4	թիվ 29 ավագ դպրոց	Կենտրոն, Սարյան 23	58327	6	1
5	<<Հերացի ավագ դպրոց>>	Քանաքեռ-Զեյթուն, Հր.Ներսիսյան 3	285360	3	1
6	թիվ 42 ավագ դպրոց	Կենտրոն, Մաշտոցի 5/2	535641	2	1
7	թիվ 43 ավագ դպրոց	Էրեբունի, Նոր Արեշ 9/53	450730	2	1
8	թիվ 46 ավագ դպրոց	Շենգավիթ, Մանանդյան 3	445301	2	1
9	թիվ 54 ավագ դպրոց	Արաբկիր, Ն.Տիգրանյան 12	231891	3	1
10	թիվ 62 ավագ դպրոց	Նոր-Նորք 1-ին զանգ., Նանսենի 6	634520	3	1
11	թիվ N 65 ավագ դպր.	Շենգավիթ,Ֆրունզե 56	480922	3	1
12	թիվ 83 ավագ դպրոց	Արաբկիր,Օրբելի 63,	227441	3	1
13	թիվ 94 ավագ դպրոց	Աջափնյակ, Բաշինջաղյան 100	398920	2	1
14	թիվ 97 ավագ դպրոց	Ներքին Շենգավիթ 12փ.	481091	2	1
15	թիվ 103 ավագ դպրոց	Քանաքեռ-Զեյթուն, Սարկավագի 14	284685	2	1
16	թիվ 105 ավագ դպրոց	Մալաթիա-Սեբաս., Օտյանի 45	736391	3	1
17	թիվ 109 ավագ դպրոց	Աջափնյակ, Մարգարյան 2-րդ նրբ.,14	340944	2	1
18	թիվ 112 ավագ դպրոց	Սեբաստիա-84	774646	3	1
19	թիվ 114 ավագ դպրոց	Կենտրոն, Հանրապետության 73	527412	3	1
20	թիվ 115 ավագ դպրոց	Շենգավիթ,Շիրակի 72/1	423322	2	1
21	թիվ 118 ավագ դպրոց	Աջափնյակ, Արզումանյան 8	391070	3	1
22	թիվ 119 ավագ դպրոց	Էրեբունի, Տիգրան Մեծի 64	573740	5	1
23	թիվ 127 ավագ դպրոց	Քանաքեռ-Զեյթուն, Պ.Սևակի 11	281332	2	1
24	թիվ 139 ավագ դպրոց	Նոր-Նորքի 2-րդ զանգ. Ն.Ստեփանյան	635570	2	1
25	թիվ 142 ավագ դպրոց	Նոր–Նորքի 4-րդ զանգ Գյուլիքեխվյան	635950	2	1
26	թիվ 148 ավագ դպրոց	Արաբկիր, Սունդուկյան 78	227366	3	1
27	թիվ 149 ավագ դպրոց	Արաբկիր, Հովսեփ Էմինի 8	237220	2	1
28	թիվ 159 ավագ դպրոց	Նոր –Նորք,Նորքի 5-րդ զանգ.,	641133	2	1
29	թիվ 170 ավագ դպրոց	Ավան, Թումանյան 3	610930	3	1
30	թիվ N 182 ավագ դպրոց	Կենտրոն, Կրիվոյի 55	540010	2	1
31	թիվ 184 ավագ դպրոց	Մալաթիա-Սեբաս., Շերամի 91 ա		4	1
32	թիվ 189 ավագ դպրոց	Դավիթաշեն 1-ին թաղ., Տիգրան Մեծի	369220	3	1
33	թիվ 190 ավագ դպրոց	Մալաթիա-Սեբաս., Հ/Ա Բ-2 թաղամաս	722160	5	1
34	թիվ 195 ավագ դպրոց	Աջափնյակ, Մ.Մազմանյան 5ա,	342400	5	1
35	թիվ 198 ավագ դպրոց	Նոր Նորքի 9 զ.13/1,	667250	5	1
36	<<Մխիթար Սեբաստացի>> կրթահամալիր	Մալաթիա-Սեբաստ., Հ-Ա Բ-1	741112	5	1
37	<<Օլիմպոս>> կրթահամալիր	Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 6	650702	5	1

38	Հայկ. պետ. մանկ. համալ.ավագ դպրոց	ք. Երևան, Խանջյան 13	522533	10	1
39	ՀՊՃՀ ավագ դպրոց	ք.Երևան,Տերյան 105, 5-րդ մասնաշենք	520630	2	1
40	ՀԱԱՀ ավագ դպրոց	ք. Երևան, Կորյունի 19	524359	2	1
41	Վ.Թեքեյանի անվան թիվ 92 դպրոց	ք.Երևան, Սեբաստիա 84	777175	2	1
42	Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց	ք.Երևան, Ազատութ. պող., 2-րդ նրբ. 9	201310	2	1
43	Անանիա Շիրակացի ճեմարան	ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգվ.	640102	2	1
44	Երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 13	581894	1	1
43	Չայկովսկու երաժշ. միջնակարգ դպրոց	ք.Երևան, Կողբացի 36	532232	1	1
46	Մ.Մելքոնյանի ռազմարզական վարժարան	pn.monte@mil.am	353914	2	1
47	Վ. Թոթովենցի անվ. N57 հիմնակ. դպրոց	ք.. Երևան, Ագաթանգեղոսի 7ա	527826	1	1
48	Օլիմպ. հերթափոխի պետական Մարզական քոլեջ	Արամ Մանուկյան 31	773430	1	1
49	Պարարվեստի պետական քոլեջ	Երևան, Բայրոնի 5	564426	1	1
50	Երևանի տես. խանգ. ունեցող երեխաների N 14 հատուկ դպրոց	ք. Երևան, Մամիկոնյանց 31	235000	1	1
51	Երևանի լսող.խանգ. ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր	ք. Երևան Նորքի այգիներ - 193	651050	1	1
52	Երևանի N 16 հատուկ դպրոց	ք. Երևան, Աղի հանք, Աճառյան 40	612840	1	1
53	Երևանի հենաշարժ. խախտ. ունեցողների N 17 հատուկ դպրոց	ք. Երևան, Մոլդովական 41	646601	1	1
54	Հանրապետական N 1 հատուկ կրթահամալիր	ք. Երևան, Վարդաշեն, 6-րդ փող. 2	451421	1	1
55	Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր	ք. Երևան, Ռաֆֆու 113	742206	1	1
	ԸՆԴԱՄԵՆԸ՝			150	55

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ա. Հարությունյան

Հավելված 2
«18» «04» 2017թ. կնքված
N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/32 գնման պայմանագրի

Գնման ժամանակացույց

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը, հազ.դրամ	Ենթակա է գնման 2017թ-ի ընթացքում՝ ընդ որում.		Ընդամենը	
				4-րդ եռամսյակ /հոկտեմբեր/			
				քանակը	գումարը, հազ.դրամ	քանակը	գումարը, հազ.դրամ
1	2	3	4	7	8	9	10
	Ուսումնական նյութերի տպագրման ծառայություններ, այդ թվում.						
1	101 զարմանահրաշ գիտափորձեր	հատ	4.50	7500	33750.0	7500	33750.0
2	Ռուս-հայերեն բառարան հոմանիշների, հականիշների, համանունների, հարանունների (Русско-армянский словарь синонимов, антонимов, омонимов, [illegible])	հատ	3.50	4500	15750.00	4500	15750.0
3	Տրամաբանական խաղեր	հատ	1.60	14000	22400.0	14000	22400.0
4	Տրամաբանական խաղեր ՈՒՁ	հատ	1.00	1400	1400.0	1400	1400.0
5	Հայ գրողների դիմանկարներ	հատ	5.00	1400	7000.0	1400	7000.0
Ընդամենը							**80300.0**

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ա. Հարությունյան

Հավելված 3

<< 18 >> << 04 >> 2017թ կնքված

N ՀՀԿԳՆԲԸԱՀԾՁԲ-17/32 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Ենթակա է վճարման << 2017թվականի պետական բյուջեի՝<<Ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռք բերում>> ծրագրից, ընդ որում՝												
		1-ին եռամսյակ			1-ին կիսամյակ			9 ամիս			տարի			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս /մինչև 10-ը/	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր /մինչև դեկտեմբերի 25-ը/	
Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ, այդ թվում՝ ուսումնական նյութերի տպագրման ծառայություններ	4263				30000.0	30000.0	30000.0	80300.00	80300.00	80300.00	80300.00	80300.00	80300.00	80300.00

Պատվիրատու

_____Ն. Հարությունյան

Կատարող

_____Ա. Հարությունյան